



«Իրավաբանական լրատուն» պարբերական է, որը նպաստում է արդի իրավական մշակույթի ձևավորմանը

2007թ. հունվար, թիվ 1 (8)

ՎԱՇ ՆՐԱՆ, ՈՐԸ ՏՈՒՆ Է ՇԻՆՈՒՄ ՈՉ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՎԵՐՆԱՀԱՐԿ Է ԿԱՌՈՒՑՈՒՄ ՈՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ:

Փ.ԲՅՈՒԶԱՆԴ

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը նոր ինստիտուտ է, այն Հայաստանում հիմնադրվել է 2003թ.-ի վերջին: Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Անչափ կարևորելով Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը՝ օբյեկտիվորեն պետք է նշել, որ այսօր հայ հասարակության գիտակցության մեջ դեռևս այն չի արմատավորվել որպես մարդու իրավունքների պաշտպանության անկախ ազգային ինստիտուտ: Պատճառները և՛ օբյեկտիվ են, և՛ սուբյեկտիվ: Հիմնական պատճառներից մեկն էլ այն է, որ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի լիարժեք կայացման համար անհրաժեշտ է որոշակի ժամանակ: Ինչևէ, մարդու իրավունքների պաշտպանի անկախության և արդյունավետ ու լիարժեք գործունեության համար առաջին կարևոր քայլը արդեն արվել է. ՀՀ Սահմանադրությամբ սահմանվել են մարդու իրավունքների պաշտպանի ընտրության նոր կարգն ու անկախության երաշխիքները: Հաջորդ քայլը պետք է կատարի ինքը՝ մարդու իրավունքների պաշտպանը, այն է՝ իր ամենօրյա գործունեությամբ կարողանա վստահել հասարակության վստահությունը:



ԼՐԱՅՈՍ

ՀԱՄԱՐԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

Իրավաբանական լրատուն հարցազրույց է անցկացրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանի հետ: Հարցազրույցը՝ էջ 4-5-ում:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԸՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մասնագիտական որակավորման ստուգման արդյունքներով դատավորների հավակնորդներից միայն քսանչորսն են ստացել անցողիկ ինքն և ավելի միավորներ: Սույն կարգով դատավորների ընտրություն վերջին անգամ է կատարվում: Դատական օրենսգրքի նախագիծը, որն ԱԺ-ում առաջին ընթերցմամբ ընդունվել է, ենթադրում է, դատավորների ընտրության այլ կարգ:

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2007թ.-ի հունվարի 24-ին Վանաձորում սպանվել է քաղաքի ավագ նոտար Սոնա Վերանյանը: Այցելուներից մեկը Վերանյանի վրա կրակ է բացել վերջինիս աշխատասենյակում և դիմել փախուստի: Ստացած երկու հրազենային վերքերից 53-ամյա Սոնա Վերանյանը մահացել է հիվանդանոց տեղափոխելու ճանապարհին: Հանցագործությունը կատարելու կասկածանքով ձերբակալվել է Կ.Պապյանը, որին ՀՀ Լոռու մարզի դատախազությունը ներգրավել է որպես մեղադրյալ և մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի, 235-րդ հոդվածի 1-ին մասի և 236-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: Կ.Պապյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

2007թ.-ի հունվարի 24-ին ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանին ՀՀ արդարադատության նախարարության 2006թ.-ի գործունեության հաշվետվությունն է ներկայացրել նախարար Դավիթ Հարությունյանը: Քննարկումների արդյունքում, նկատի առնելով տարվա ընթացքում ոլորտում իրականացված աշխատանքների մեծ ծավալն ու կատարման որակը, վարչապետ Անդրանիկ Մարգարյանը ՀՀ արդարադատության նախարարության 2006թ.-ի գործունեությունը գնահատել է գերազանց:

ՏԵՍԱԿԵՏ

«Եթե կիրառենք բարձր չափանիշներ, դատավորների մի մասը չի համապատասխանի դրանց»: 2007թ.-ի հունվարի 22-ին լրագրողների հետ հանդիպմանը նման կարծիք է հայտնել ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Հովհաննես Մանուկյանը: Մակայն, ըստ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի, դատական համակարգի հետ կապված խնդիրներում պետք է լինել շատ ուշադիր, և համակարգին առնչվող ցանկացած, այդ թվում՝ օրենսդրական փոփոխություն պետք է կատարվի շատ զգուշորեն, «քանի որ մշտապես առկա է դատավորների անկախությունը խաթարելու վտանգը»: «Միևնույն ժամանակ գտնում են, որ օր-օրի պետք է բարձրացնենք դատավորներին առաջադրվող պահանջները»,- նշել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահը: Դրանք, ըստ նրա, պետք է լինեն ինչպես մասնագիտական, այնպես էլ բարոյական, էթիկական պահանջներ, քանի որ դատավորների գործունեությունը պետք է ենթարկվի էթիկական խիստ վերահսկողության, իսկ դատարանում իրենց գործառնությունները իրականացնելիս և հասարակության մեջ որպես անհատ հանդես գալիս նրանց պահվածքը, վարվելակերպը պետք է էականորեն տարբերվի և լինի օրինակելի:


ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՓՈԽՆԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՍՍՈՒՄ

1991 թվականի սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեից սկսած՝ Հայաստանը թևակոխեց զարգացման նոր փուլ՝ հասարակական-քաղաքական կյանքի արմատական վերափոխումների փուլ: Նորանկախ պետությունը ձեռնամուխ եղավ պետական իշխանության մարմինների գործունե համակարգի ստեղծմանը և օրենսդրական նոր դաշտի ձևավորմանը, ազատ շուկայական հարաբերությունների արմատավորմանը: Հասարակական այս վերափոխումներն ամրագրվեցին 1995թ. հուլիսի 5-ին ընդունված Սահմանադրության մեջ: 1995թ. ընդունված ՀՀ Սահմանադրությունն էական դեր խաղաց Հայաստանում ժողովրդավարության արմատավորման և պետական իշխանության ինստիտուտների աստիճանական կայացման գործում:

Միևնույն ժամանակ պետական իշխանության համակարգի հետագա կատարելագործման անհրաժեշտությունը, Եվրախորհրդին անդամակցելու առնչությամբ ստանձնած իրավական պարտավորությունները հրատապ դարձրեցին սահմանադրական բարեփոխումների իրականացումը ՀՀ-ում: Սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը նախ և առաջ պայմանավորված էր նրանով, որ 1995թ. ՀՀ Սահմանադրությամբ հետևողականորեն իրացված չէր իշխանությունների տարանջատման սկզբունքը՝ հավասարակշռել Նախագահ- Ազգային ժողով-կառավարություն- դատական իշխանություն փոխհարաբերությունները: Գիտնականները գտնում էին, որ անհրաժեշտ էր ամրապնդել Ազգային ժողովի օրինաստեղծ դերը՝ հաղթահարելով Ազգային ժողովը լուծարելու՝ ՀՀ Նախագահի վերացական բացարձակ իրավունքը՝ ուժեղացնելով իշխանության այլ թևերի գործառնական լիազորությունները և այլն: Վերը նշված խնդիրների լուծման անհրաժեշտության արդյունք դարձավ 2005թ. նոյեմբերի 27-ին ՀՀ-ում անցկացված սահմանադրական հանրաքվեն, որի ժամանակ ժողովուրդը կողմ քվեարկեց Սահմանադրության բարեփոխված տարբերակին: Այդ հանրաքվեի արդյունքում 1995թ. Սահմանադրության ինը տասնյակից ավելի հոդվածներ ենթարկվեցին փոփոխությունների, Հիմնական օրենքը լրացվեց 27 նոր հոդվածներով: Արված փոփոխությունները երաշխիքներ ստեղծեցին իշխանությունների տարանջատման սկզբունքի հետևողական իրագործման համար, ինչպես նաև պետական իշխանության մարմինների միջև լիազորությունների հավասարակշռության ապահովման համար:

Սահմանադրական բարեփոխումների համատեքստում արմատականորեն վերանայվեց ՀՀ Նախագահ-Ազգային ժողով փոխհարաբերությունների բովանդակությունը: Նախևառաջ՝ վերանայվեց կառավարության ձևավորման կարգը, որը որոշ տեսաբաններին հիմք է տալիս պնդելու, որ ՀՀ-ը կիսանախագահական հանրապետությունից անցում կատարեց կիսախորհրդարանականի: Մասնավորապես, համաձայն ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով) 55-րդ հոդվածի 4-րդ կետի՝ ՀՀ Նախագահն Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա վարչապետ է նշանակում պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին: Հանրապետության Նախագահը վարչապետ է նշանակում կառավարության հրաժարականի ընդունումից հետո՝ տասնօրյա ժամկետում: Կառավարությունը կազմավորվում է վարչապետի նշանակումից հետո՝ քսանօրյա ժամկետում: Հանրապետության Նախագահը վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է կառավարության անդամներին:

Կարծում ենք, որ այս նորամուծությունը հնարավորություն կտա արտացոլել քաղաքական ուժերի իրական հարաբերակցությունը գործադիր իշխանության մարմիններում, ինչը թույլ կտա պետությանը զերծ պահել քաղաքական հեղինակությունը իրավիճակներից: Վերանայված համաձայն ժողովի ցուցումով մանրամասնվեց նաև կառավարության ոչ միայն ձևավորման, այլև հրաժարականի կարգը և Նախագահի կողմից այդ հրաժարականի ընդունման կարգը: Մասնավորապես, ամրագրվեց, որ Հանրապետության Նախագահն



ընդունում է կառավարության հրաժարականը նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի, Հանրապետության Նախագահի կողմից իր պաշտոնը ստանձնելու, կառավարությանն անվստահություն հայտնվելու, կառավարության ծրագրին հավանություն չտալու, վարչապետի կողմից հրաժարական ներկայացվելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու օրը: Հանրապետության Նախագահի կողմից կառավարության հրաժարականի ընդունումից հետո կառավարության անդամները շարունակում են իրենց պարտականությունների կատարումը՝ մինչև նոր կառավարության կազմավորումը:

Սահմանադրական բարեփոխումների համատեքստում կարևորվեց նաև ՀՀ Նախագահի և Ազգային ժողովի փոխհարաբերության վերանայումը՝ պետական մարմիններ ձևավորելու և պաշտոնատար անձանց նշանակելու ոլորտում: Մասնավորապես, միանգամայն նոր լիազորություն է գլխավոր դատախազի թեկնածու- քյան առաջադրումը ԱԺ-ի հաստատմանը: Փաստորեն, նախկին այս միանձնյա լիազորությունը ՀՀ Նախագահն այժմ ստիպված է կիսել ԱԺ-ի հետ (55 հոդվ. 9-րդ կետ): Սահմանադրության 55-րդ հոդվածի կետեր 13 և 14-ում էական վտանգներ են թաքնված: Դրանք վերաբերում են մարդու իրավունքների հնարավոր սահմանափակումների շրջանակներին և թղթակցում են նաև Սահմանադրության մի շարք այլ հոդվածների, մասնավորապես, 45-րդ հոդվածի հետ: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան ու դրան կից արձանագրությունները, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածը, ինչպես նաև մարդու իրավունքների միջազգային բազմաթիվ այլ փաստաթղթերի նորմեր վկայում են, որ այդ սահմանափակումները կարող են լինել միայն միջազգայնորեն ընդունված շրջանակներում, օրենքով սահմանված, իրավիճակին համաչափ: Եթե Հանրապետության Նախագահն իրականացնում է գործողություններ, որոնք առնչվում են մարդու իրավունքներին, ապա դրանք հստակ հակակշռված ու զսպելի պետք է լինեն: Այդ նպատակով նախատեսվում է, որ իրավունքի ուժով իրավիճակում է Ազգային ժողովի հատուկ նիստ, որը կարող է համարժեքության գնահատական տալ՝ դիմելով ու 24 ժամվա ընթացքում ստանալով նաև սահմանադրական դատարանի եզրակացությունը, և դադարեցնել նշված կետերով նախատեսված միջոցառումները: Միջազգային իրավունքի նորմերի պահանջներից ելնելով՝ ավելացվում է նոր երաշխիք. նույնպես նախատեսվում է, որ ռազմական դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով: Բացի

դրանից՝ Սահմանադրության 6-րդ հոդվածի լրացումից բխում է, որ օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում միայն պաշտոնական հրապարակումից հետո: Հետևաբար, բոլոր իրական նախադրյալները ստեղծվում են Նախագահի տվյալ լիազորությունների արդյունավետ հակակշռման համար:

1995թ. ՀՀ Սահմանադրության ամենախոցելի դրույթներից մեկն Ազգային ժողովն արձակելու՝ Նախագահի վերացական իրավասության առկայությունն է: Նման նորմը լրջորեն խախտում է իշխանությունների տարանջատման հաշվեկշիռը, որի հետևանքով թուլացվում է օրենսդիր մարմնի անկախությունն ու ինքնուրույնությունը: Սահմանադրական բարեփոխումների արդյունքում Սահմանադրության տեքստում հստակ նախատեսվեցին այն դեպքերը, որոնց պարագայում միայն ՀՀ Նախագահը կարող է արձակել Ազգային ժողովը: Այդ դեպքերը ամրագրվեցին լրացուցիչ հոդվածով (74.1-րդ հոդվ.), որի համաձայն՝ ՀՀ Նախագահն իրավունք ունի արձակել ԱԺ-ը, եթե.

1. ԱԺ-ը հերթական նստաշրջանի 3 ամսվա ընթացքում որոշում չի կայացնում կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի վերաբերյալ,
2. հերթական նստաշրջանի ընթացքում ԱԺ-ի նիստերը երեք ամսից ավել չեն գումարվում,
3. հերթական նստաշրջանի ընթացքում ԱԺ-ը երեք ամսից ավելի իր կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ որևէ որոշում չի կայացրել:

Միևնույն ժամանակ, նույն հոդվածում առկա են նաև որոշ բացթողումներ: Մասնավորապես, հոդվածի առաջին պարբերությունը ամրագրում է, որ ՀՀ Նախագահը արձակում է Ազգային ժողովը, եթե վերջինս երկու ամսվա ընթացքում երկու անգամ անընդմեջ հավանություն չի տալիս կառավարության ծրագրին: Մեր կարծիքով, ՀՀ Սահմանադրության մեջ նման կատեգորիկ պահանջով նորմի ամրագրումը կառավարության ծրագրի հաստատման հարցում այլընտրանքի հնարավորություն չի ընձեռում Ազգային ժողովին, քանզի, գիտակցելով արձակվելու վտանգը, օրենսդիրը ստիպված կլինի հաստատել կառավարության կողմից ներկայացված՝ իր համար անընդունելի ծրագիրը, ինչի արդյունքում կձևավորվի ՀՀ Նախագահի «վստահությունը» վայելող կառավարություն: Փաստորեն, այս նորամուծությունը ՀՀ Նախագահին հնարավորություն է ընձեռում անուղղակի կերպով վերահսկողություն իրականացնել կառավարության կազմավորման գործընթացի նկատմամբ:

Միջազգային պրակտիկայում Նախագահի պաշտոնանկության հիմքերը տարբեր են, սակայն միշտ անհրաժեշտ է դատական մարմնի եզրակացությունը: Եզրակացությունների վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումները երեքն են.

1. դա ամբողջությամբ թողնված է ընդհանուր իրավասության դատարանների բարձրագույն դատական ատյանին,
2. իրավասությունը վերաբաշխված է ընդհանուր իրավասության և սահմանադրական արդարադատության մարմինների միջև,
3. իրավասությունը վերապահված է սահմանադրական դատարաններին:

Առաջին խմբի մեջ են մտնում ոչ միայն սահմանադրական արդարադատությունն ընդհանուր իրավասության դատարանների միջոցով իրականացնող շուրջ 48 երկիր (կոչվում է ամերիկյան դատական համակարգ), այլև եվրոպական դատական համակարգին պատկանող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Լեհաստանը (լսում է Պետական տրիբունալը, Սահմանադրություն, հոդվ. 131), Պորտուգալիան (հոդվ. 133) և այլն:

Մեծ թիվ են կազմում հատկապես այն երկրները, որտեղ մեղադրանքի հիմնավորման հարցը վերապահվում է ընդհանուր իրավասության դատարաններին, իսկ սահմանադրական ընթացակարգի պահպանման հարցը՝ սահմանադրական դատարաններին (Ռուսաստան՝ հոդվ.

93, Ղազախստան՝ 47, Վրաստան՝ 63, Ադրբեջան՝ 120, Ուկրաինա՝ 111 և այլն):

Քիչ չեն նաև այն երկրները, որոնցում իրավական գնահատականի հարցը հիմնականում թողնված է սահմանադրական դատարաններին (Մյովակիա՝ հոդվ. 107, Ռումինիա՝ 94, Բուլղարիա՝ 103, Չեխիա՝ 65, Ղրղզստան՝ 51, Խորվաթիա՝ 105 և այլն), սակայն շատ տեղերում նախապես կազմակերպվում է նաև կամ սենատի, կամ էլ պառլամենտական հանձնաժողովի կողմից հատուկ քննություն: Իսկ, օրինակ, Ղրղզստանում, պառլամենտի կողմից բարձրացված պաշտոնանկության հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի բացասական եզրակացության դեպքում արձակվում է պառլամենտը:

Միջազգային պրակտիկան տալիս է պաշտոնանկության ընթացակարգի նկատմամբ դատական վերահսկողության բոլոր հնարավոր տարբերակների վերաբերյալ հարուստ փորձ: Վերջինիս ընդհանրացումը վկայում է, որ առանց դատարանի դրական կարծիքի նման ընթացակարգ չի կարող սկսվել: Այս մոտեցումն ամրագրվեց նաև բարեփոխված սահմանադրության տեքստի մեջ: Մասնավորապես, Սահմանադրության բարեփոխված տարբերակում մանրամասն կարգավորվեց իմպիչմենտի ընթացակարգը: Լրացուցիչ ամրագրվեց, որ եթե ՄԴ-ի եզրակացությամբ ՀՀ Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերը բացակայում են, ապա հարցը հանվում է ԱԺ-ի քննարկումից: Սակայն գտնում ենք, որ գուցե նպատակահարմար կլինեք, որ պաշտոնանկության ընթացակարգի քրեաիրավական չափանիշի որոշման վարույթը տրվեր ոչ թե ՄԴ-ին, այլ Վճռաբեկ դատարանին:

Բարեփոխումների արդյունքում մանրամասնվեց նաև Նախագահի կողմից հրաժարականի ներկայացման կարգը ԱԺ-ին: Մասնավորապես, համաձայն 58-րդ հոդվածի՝ հրաժարականը ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետը լրանալուն պես, երկօրյա ժամկետում հրաժարականը կրկին ներկայացնելու դեպքում Հանրապետության Նախագահի հրաժարականը համարվում է ընդունված, և Սահմանադրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում անցկացվում է արտահերթ ընտրություն:

Բացի այդ՝ ամրագրվեց, թե Նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում ինչպես է ԱԺ-ի նախագահը կամ վարչապետն իրականացնում նախագահի պարտականությունները և որ լիազորություններն իրավունք չունի իրականացնել: Մասնավորապես, այդ ընթացքում արգելվում է նշանակել հանրաքվե, նշանակել վարչապետին, նշանակել և ազատել զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը (բացառությամբ ռազմական դրության ժամանակ), օրենքով նախատեսված դեպքերում նշանակումներ կատարել ոստիկանության և ազգային անվտանգության մարմինների պաշտոններում, ինչպես նաև իրականացնել Սահմանադրության 55-րդ հոդվածի 3, 8, 16, 17-րդ կետերում սահմանված լիազորությունները:

Հետաքրքիր է նաև այն համագամները, որ Նախագահին զրկեցին ԱԺ-ի արտահերթ նստաշրջան հրավիրելու իրավունքից (հոդվ. 70):

Այսպիսով՝ սահմանադրական բարեփոխումների արդյունքում քայլ արվեց իշխանության ողջ համակարգի արդյունավետ գործունեությունն ապահովելու ուղղությամբ, չնայած իրականում ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ Նախագահի միջև հավասարակշռություն հաստատելը դժվարին խնդիր է՝ առավել ևս դեռ չկայացած ժողովրդավարական հասարակարգի պայմաններում: Սակայն Վեներելիյան հանձնաժողովի եզրակացության համաձայն՝ Հայաստանն այս առումով գտնվում է ճիշտ ուղու վրա, և այս խնդիրն իրականացնելու համար ստեղծված են բոլոր օրենսդրական նախապայմանները:

ՇԱՍԻԿ ԵՆԳՈՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության իրավական և կառուցվածքային բարեփոխումների բաժնի ավագ դատախազ, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԱՅՆՄԱՆ ԿԱՐԻՔ ԶԿԱ, ԿԱՐԵՎՈՐԸ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ Է

-Պարոն Հարությունյան, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության դաշտը կարգավորող օրենսդրությունը արդյո՞ք բավարար է արդյունավետ կերպով պաշտպանելու ՀՀ քաղաքացիների իրավունքները, թե՞ ոչ: Եվ այս համատեքստում արդյո՞ք չէ՞ կարծում, որ պետք է ընդլայնվի Պաշտպանի լիազորությունների ցանկը:

-Կապված օրենսդրության հետ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդրությունը արտացոլում է այն հարաբերությունների իրավիճակը, որ գոյություն ունի, և կարգավորում է դրանք, իհարկե, այսօր մենք օրենսդրության տեսակետից որևէ խոչընդոտ չունենք, որպեսզի մեր լիազորությունները իրականացնենք, երբ օրենքը բավարար իրավունքներ է տալիս, և եվրոպական, ժողովրդավարական չափանիշների տեսակետից էլ որևէ խնդիր չկա: Իհարկե, կյանքը դինամիկայի մեջ է, և այդ տեսակետից հարաբերություններում, իմաստաբան գործունեության մեջ նոր երանգներ, նոր իրավիճակներ են առաջանում: Եվ այդ առումով յուրաքանչյուր օրենք, կամ օրենքների համակարգ, որ վերաբերում են այս կամ այն բնագավառին, կյանքի հետ համընթաց պետք է քայլեն և կարող է ինչ-որ տեսակետից փոփոխման կարիք ունենան: Այս տեսակետից չեն բացառում մասնապաշտպանի բնագավառին վերաբերող օրենսդրությունը: Բայց այսօր, եթե հարցը այսպես ենք դնում, թե արդյո՞ք օրենսդրության մեջ կան դրույթներ, որոնք խոչընդոտում են պաշտպանի գործունեության արդյունավետությունը, ապա սաես, որ՝ ոչ: Այսօր ՀՀ օրենսդրության տեսակետից որևէ խոչընդոտող դրույթ, այդպիսի խնդիր չունենք: Չնայած՝ մյուս կողմից էլ յուրաքանչյուր պաշտոնյա իր լիազորությունների ընդլայնման վերաբերյալ կարող է շատ փաստարկներ բերել: Ես այստեղ սուբյեկտիվ չեմ ցանկանում լինել:

-Արդեն մտտ մեկ տարի է, ինչ դուք ընտրվել եք Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, խնդրում եմ բվարկել այս ժամակահատվածում Պաշտպանի կարևորագույն ձեռքբերումները:

-Շատ դժվար հարց եք տալիս, քանի որ պետք է չափանիշը որոշել, թե կարևոր ձեռքբերումը որն է, որովհետև ձեռքբերում կարող է լինի մի խնդիր, որով պաշտպանը արդյունքի չի հասել, բայց, այնուամենայնիվ, այդ խնդիրը պաշտպանը հանրայնացրել է և այդ հարցը հասարակական հնչեղություն է ստացել, այնինչ այլ ինստիտուտից որևէ հնչեղություն այն չէր ստանում: Չնայած՝ հարցը չի լուծվել: Ձեռքբերում է մաև այն, որ մասսայականություն չի կրում, սակայն մեկ քաղաքացու հարցով երկարատև զբաղվել ենք և հասել նպատակի: Այսինքն՝ մարդու իրավունքների պաշտպանության հարցում կարևորագույն և ոչ կարևորագույն ձեռքբերումներ չկան: Ձեռքբերումը մեկն է. կարողանում ենք մենք մարդկանց հարցերը լուծել, և երկրորդ՝ կարողանում ենք նրանց խնդիրները լուծել՝ պոպուլիզմի մեջ չմտնելով: Որովհետև այս պաշտոնի ամենավտանգավոր և դժվար բանը մա է, որպեսզի մարդու իրավունքների պաշտպանը գերծ մնա պոպուլիզմից, գերծ մնա ինչ-որ շոուներ կազմակերպելուց: Մեզ համար չափանիշը մարդկանց իրավունքները վերականգնելն է: Այս տեսակետից ես կարծում եմ, որ մենք որոշ հաջողություններ ունենք թե մարդկանց սեփականության իրավունքի հետ կապված, թե նրանց այլ սոցիալական հարցերի հետ կապված հարցերում, դատախազության, ոստիկանության, դատարանների բնականոն գործունեության հետ հարցերում: Եվ այստեղ ամենամեծ ձեռքբերումը այն է, որ պետական մարմինները հստակ համագործակցության կարգ են որդեգրել պաշտպանի հետ հարաբերություններում: Մա երևի ամենամեծ ձեռքբերումն է: Ոչ թե բոլորում են, ոչ թե անտեսում, արհամարհում են և կոնֆլիկտ են առաջացնում, որի արդյունքում մաև ՀՀ-ի վարկանիշն է տուժում, այլ պարզապես հասկացել են, որ մարդու իրավունքները կարգախոս չէ, դա բոլորիս է վերաբերում: Ամենամեծ ձեռքբերումը այն է, որ բոլորը մեզ հետ համագործակցում են, և մի շարք կարևորագույն հարցեր կարողացել ենք լուծել, մասնավորապես, Կոզեռնի բաղամասի բնակիչներին սեփականատեր ճանաչելու հարցերը, Հյուսիսային պողոտայի հետ կապված խնդրի և կուսակցությունների մասին օրենքի հետ կապված մի շարք հարցեր



կարողացանք Սահմանադրական դատարանում բարձրացնել և հաղթել՝ օրենքների որոշ դրույթներ հակասահմանադրական ճանաչելու միջոցով, ինչպես մաև ամենօրյա աշխատանքի ընթացքում այս կամ այն քաղաքացու հարցեր:

-Ինչպե՞ն կգնահատեք մարդու իրավունքների պաշտպանության ներկա վիճակը ՀՀ-ում և, այս առումով, որոնք են հրատապ լուծումներ պահանջող հիմնախնդիրները:

-Հրատապ լուծումներ և ոչ հրատապ լուծումներ չկան, բոլոր հարցերն էլ հրատապ են, և այստեղ մենք դոմինանտ և ոչ դոմինանտ հարցեր չունենք: Ինչ վերաբերում է մարդու իրավունքների պաշտպանության ներկա վիճակին, սաես, որ Հայաստանի Հանրապետությունը տիպիկ հետսովետական երկիր է և որոշ ելույթներում երբ ասում են, թե Հայաստանը հետընթաց է ապրել, ապա դա իմ կարծիքով սխալ տեսակետ է: Իրականում այսօր դեռ լուրջ բարելավման արդյունքներ չունենք, միտումները կան, օրենսդրությունը կա, աշխատանքը կա, բայց երևի դեռ ժամանակ է պետք, որ դրանք մաև որակ ապահովեն: Այսօր մարդու իրավունքների պաշտպանության ներկա վիճակը Հայաստանում բավարար չէ: Մարդիկ այսօր թերահավատ են պետական կառույցների նկատմամբ, և նրանց վստահությունը վերականգնելու նպատակով դեռ լուրջ անելիքներ ունենք: Լուրջ խնդիրներ և անելիքներ ունենք մաև իրավապահ, տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման մարմիններում և նախարարություններում:

-Մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից ներկայումս արդյո՞ք արդյունավետ է իրականացվում արդարադատությունը ՀՀ-ում:

-Դժվար է ընդհանուր գնահատական տալ, թե արդարադատությունը արդյունավետ է իրականացվում, թե՞ ոչ: Ես կարծում եմ, որ այն բարեփոխումները, որոնք ներկայումս իրականացվում են արդարադատության բնագավառում, օրենսդրական տեսակետից կոչված են արդարադատության արդյունավետությունը խրախուսելուն, և այս առումով, կարծում եմ, որ այդ բարեփոխումները իրենց դրական դերը կունենան: Մյուս կողմից էլ առաջինը մենք պետք է արդարադատություն իրականացնող մարմիններին, մասնավորապես, դատական համակարգին ռեալ անկախություն, ինքնուրունություն տանք, հետո գնահատենք նրանց գործունեությունը: Ես հույս ունեմ,

որ դատական համակարգը իրոք կդառնա երրորդ իշխանության ճյուղ, և այդ հարցում, համոզված եմ, որ այն իրոք արդյունավետ կգործի: Որքան անկախ, այնքան արդյունավետ: Անհրաժեշտ է նաև քաղաքական կամք դատական համակարգը ավելի անկախ դարձնելու համար: Դատական իշխանությունը պետք է անկախ լինի և գործադիրից, և օրենսդրից, որպեսզի քաղաքական իշխանությունը չկարողանա նրան ուղղորդել և հրահանգել: Այդ անկախությունը պայմանավորված է և համապատասխան օրենսդրությամբ, և սոցիալական հարցերով, կոմպլեքս հարցերի լուծումով պետք է հասնենք դատական համակարգի անկախությանը: Այս ամենը հետո կբերի արդեն որոշակի հոգեբանության կերտմանը, կձևավորի մարդու այդ տեսակը: Եվ այս առումով ներկայիս բարեփոխումները, միգուցե, նաև միտված են դատական համակարգի անկախության խնդրի լուծմանը: Ապագան ցույց կտա:

Ինչպե՞ս եք պատկերացնում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ Պաշտպանի համագործակցությունը:

Հասարակական կազմակերպությունների հետ կապված՝ ես չեմ ցանկանա զնահատական տալ, քանի որ մի քիչ սխալ է, որ մարդու իրավունքների պաշտպանը զնահատական տա հասարակական կազմակերպություններին: Ես միայն կարող եմ ասել, որ նրանք բավականին արդյունավետ գործում են, և մենք էլ նրանց հետ համագործակցում ենք: Շատ ուշադիր ենք նրանց բարձրացրած հարցերին: Որոշ դեպքերում էլ համագործակցում ենք՝ նրանց ընդգրկելով մեր կողմից կազմակերպված միջոցառումներին: Ավելին, երեսուցից ավելի հասարակական կազմակերպություններ գործում են պաշտպանին կից խորհրդում: Պարբերաբար հավաքվում ենք, գրուցում ենք, միասնական գործ ենք անում: Եվ պաշտպանը նրանց հետ գործունեությունը տեսնում է երկու հիմնական ուղղությամբ՝ համագործակցել հնարավորինս սերտ և պաշտպանել նրանց իրավունքները, որպեսզի չխոչընդոտվի նրանց գործունեությունը: Հասարակական կազմակերպությունները հանդիսանում են քաղաքացիական հասարակության կարևորագույն բաղկացուցիչ մասը, առանց որոնց անհիմաստ է խոսել քաղաքացիական հասարակության մասին: Օրինակ՝ լոբիինգի մասին օրենքի նախագիծ կար, որով փորձում էին դժվարացնել նրանց գործունեությունը, և մենք առաջինն էինք, որ դրա դեմ խոսեցինք:

Ըստ ձեզ՝ որքանո՞վ կայացած կարելի է համարել մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը:

Ես կարծում եմ, որ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը արդեն կայացած է: Մյուս կողմից էլ՝ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը չի կարող կայանալ, եթե երկրում իրավական պետությունը չի կայանում: Եվ այնքանով, որքանով հնարավոր է մեր երկրում կայանալ, այդքանով կայացած է: Մնացածը կախված է նրանից, թե երկիրը ինչ ճանապարհով կգնա, ու եթե երկիրը իրոք ժողովրդավարացման ճանապարհով գնաց, և երկիրը կկայանա, և մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը: Եթե երկիրը ավտորիտար ճանապարհով գնաց, սա կվերածվի ձևական մի ինստիտուտի, և այդ դեպքում՝ ով էլ որ լինի մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում՝ այնքան կարևոր չէ, քանի որ մարդկային գործոնը նշանակություն կունենա այնքանով, որքանով մի երկու հարց ավել կամ պակաս կլուծվի, բայց պաշտպանը ձևական ինստիտուտ կդառնա: Այսօր մենք միջանկյալ վիճակում ենք, և արդեն մեր ընտրությունն է, ոչ ոք մեզ չի խանգարում որ մենք որոշենք մեր պետությունը ինչ ճանապարհով պետք է զարգանա: Եվ ըստ դրա էլ կկայանան մնացած ինստիտուտները՝ թե դատականը, թե մարդու իրավունքների պաշտպանը, թե մնացածները:

Շոքված 1.

Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրության ոգով:

ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՇԱՄԵՆՂԱՆՈՒՐ ՇՈՉԱԿԳԻՐ

Շոքված 13.

Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք

Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ, եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Շոքված 26.

Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ և առանց որևէ խտրականության ունեն օրենքի հավասար պաշտպանության իրավունք, Այդ առնչությամբ որևէ կարգի խտրականություն պետք է արգելվի օրենքով, և օրենքը բոլոր անձանց համար պետք է երաշխավորի հավասար և արդյունավետ պաշտպանություն խտրականությունից ըստ որևէ հատկանիշի, այն է՝ ըստ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի, ծննդի կամ այլ հանգամանքի:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳԻՐ

Շոքված 3.

Սույն դաշնագրին մասնակցող պետությունները պարտավորվում են տղամարդկանց և կանանց համար ապահովել սույն դաշնագրում նախատեսված բոլոր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից օգտվելու հավասար իրավունք:

ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳԻՐ

Շոքված 18.

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:

Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին:

ԸՇ ՍԱՇՄԱՍԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր առմամբ, միջազգային իրավական պատասխանատվություն ասելով հասկանում ենք անբարենպաստ հետևանքների առաջացում իրավախախտ պետության համար (ավելի կոնկրետ՝ պատասխանատվության սուբյեկտի համար): Միջազգային-իրավական պատասխանատվության հասկացությունը ըմբռնելու համար կարևոր է նախ պարզել, թե ինչ է ներկայացնում իրենից պատասխանատվությունն ընդհանրապես, վերջինիս դերն ու նշանակությունը: Հակիրճ կերպով պատասխանատվությունը հանգում է իր արարքների համար հաշիվ տալուն:



Եվ խոսելով ընդհանրապես պատասխանատվության մասին՝ հարկ է պարզել որոշ հանգամանքներ (հատկություններ), որոնց ուժով կոնկրետ սուբյեկտը կարող է ենթարկվել պատասխանատվության: Հասարակական հարաբերությունների սուբյեկտի պատասխանատվության նախադրյալները արտահայտվում են նրա սուբյեկտիվ հնարավորություններում՝ օբյեկտիվ իրավիճակում ընդունելու որոշումներ, այսինքն՝ իր կամքով ընտրելու այս կամ այն վարքագիծը և, հետևաբար, լինելու պատասխանատու այդ ընտրության համար: Հայտնի իրավաբան Շերշենկիչը նշում է, որ իրավաբանական

պատասխանատվության բնույթի բացահայտման համար կարևոր նշանակություն ունի կամքի ազատության խնդիրը: Կամքի ազատության նորպես իրավաբանական պատասխանատվության էությունը բացահայտելու համար կարևոր նշանակություն ունեցող երևույթի դերն առավել ցայտուն կերպով է ընդգծում Ի. Ս. Սամոշենկոն. «Հասարակական հարաբերությունների սուբյեկտի կամքի ազատությունը հանդիսանում է իրավաբանական պատասխանատվության իրավական կարգավորման նախադրյալ»:

Անշուշտ, կամքի ազատությունը՝ որպես կատեգորիա, բնորոշ է հոգեբանությանը, փիլիսոփայությանը, սակայն դա չի բացառում նրան իրավաբանական նշանակություն տալու հանգամանքը այն պարզ պատճառով, որ ցանկացած սուբյեկտ հանդես է գալիս որպես այդպիսին միայն իր գիտակցության շնորհիվ, որ ցանկացած սուբյեկտ գործում է իր շահերը, պահանջումները, հետաքրքրությունները հաշիվ առնելով, որոնց հասնելու համար սուբյեկտը կատարում է որոշակի նպատակաձևով գործունեություն: Բնականաբար, եթե սուբյեկտն իր շահերից ելնելով է իրականացնում այդ գործունեությունը, ուստի անպայմանորեն այն իրականացվում է իր կամքով, ավելի կոնկրետ՝ կամքի ազատության միջոցով: Քերիմովի վառ խոսքերով ասած՝ «Հենց կամքն է պահանջումների, շահերի, նպատակների իրացնողը»:

Խոսելով կամքի ազատության իրականացման մասին՝ պետք է նշել, որ այն բացարձակ բնույթ չի կրում: Դրա հարաբերական բնույթը կայանում է նրանում, որ սուբյեկտին, ճիշտ է, չի պարտադրվում վարքագծի որևէ ձև, այլ նրան, այսպես ասած, առաջարկվում են վարքագծի մի քանի ձևեր՝ հնարավորություն տալով սուբյեկտին ցուցաբերելու կամք՝ վարքագծի այս կամ այն ձևը ընտրելու հարցում: Այլ կերպ ասած՝ սուբյեկտն արտահայտում է իր կամքի ազատությունը, հետևաբար, ընտրելով վարքագծի որոշակի ձև, նա դառնում է պատասխանատու իր ընտրության համար: Ասվածը երբեք էլ չի նսեմացնում մեծագույն մտածող Ֆ. Էնգելսի դրույթն այն մասին, թե «մարդը միայն այն դեպքում է կրում լրիվ պատասխանատվություն իր արարքների համար, եթե նա կատարել է դրանք՝ օժտված լինելով կամքի լրիվ ազատությամբ»: Այսինքն լրիվ ազատություն ասելով պետք է հասկանալ ոչ թե ազատության անսահմանափակություն, այլ նրա հնարավոր սահմանների ուղղվածում՝ ի տարբերություն բացարձակ կատեգորիայի (վերջինս չի ճանաչում որևէ սահմանի առկայություն):

Որոշ արևմտյան իրավաբան-միջազգայնագետներ, մասնավորապես Լ. Օպպենհեյմը, պետության պատասխանատվությունը կախվածության մեջ է դնում փոխադարձ ճանաչումից: Նման փաստարկումը հիմք է տալիս եզրակացնելու, որ բացառվում է մեկը մյուսին չճանաչած պետությունների փոխադարձ պատասխանատվությունն ընդհանրապես, ինչն էլ հակասում է միջազգային իրավունքի էությանը: Անվիճելի փաստ է, որ ցանկացած նոր կազմավորված պետություն ձգտում է ճանաչման հասնել այլ պետությունների կողմից, և որ այլ պետությունների հետ համագործակցության հիմնական նախապայման կարելի է համարել հենց ճանաչումը, իսկ վերջինս տեղի է ունենում որոշակի տևական ժամանակահատվածում: Եվ, եթե հետևենք Օպպենհեյմի տեսակետին, ապա դեռևս ճանաչման չարժանացած նոր կազմավորված պետությունը չի կարող միջազգային հարաբերությունների (ավելի կոնկրետ՝ միջազգային պատասխանատվության հարաբերությունների) մասնակից դառնալ: Դժվար է համաձայնվել նման իրավիճակի հետ, քանզի, եթե տվյալ պետությունը խախտում է միջազգային իրավունքի նորմերը և դրանով իսկ խախտում միջազգային

ընկերակցության հիմքերը, ապա նրան սուկ չճանաչման պատճառով միջազգային պատասխանատվության հարաբերությունների սուբյեկտ չդարձնելը, այսինքն՝ միջազգային-իրավական պատասխանատվության սուբյեկտ չդիտարկելը հակասում է միջազգային իրավունքի էությանն ու բնույթին: Ուստի պետությունը ճանաչման ուժով չէ, որ դառնում է միջազգային իրավունքի սուբյեկտ:

Բոլորովին էլ չի հերքվում այն հանգամանքը, որ ճանաչումը կարևորագույն երևույթ է պետությունների միջև միջազգային հարաբերությունների ստեղծման և խորացման համար, սակայն պատասխանատվությունը միանշանակ ճանաչումից կախվածության մեջ դնելու փաստը միջազգային իրավունքին ամբողջովին խորթ երևույթ է: Պետությունը պատասխանատվություն է կրում անկախ ճանաչումից, ինչը հաստատվում է այն հանգամանքով, որ պետությունը հանդիսանում է միջազգային իրավունքի սուբյեկտ ոչ թե ճանաչման ուժով, այլ իր ինքնիշխանության ուժով. «սուվերեն պետության առաջացման փաստը նշանակում է միջազգային իրավունքի սուբյեկտի առկայություն»: Բանն այն է, որ եթե ղեկավարվենք Օպպենհեյմի առաջադրած դրույթով, ապա պրակտիկան կհանդիպի լուրջ խոչընդոտների:

Դրանից ելնելով Ի. Վասիլենկոն գտնում է, որ պետության պատասխանատվության նախադրյալները պետք է փնտրել նախ և առաջ նրա միջազգային իրավասուբյեկտության հատկանիշների էության մեջ, և որպես այդպիսի նախադրյալ է նշում պետության կամքի ազատությունը, որն արտահայտվում է ինքնիշխանությամբ՝ տալով նրան հնարավորություն գործելու որպես իրավունքի սուբյեկտ՝ օժտված լինելով այլ պետությունների հետ համահավասար իրավունքներով ու գործունակությամբ:

Ընդ որում՝ պետությունն իր ինքնիշխանության ուժով էլ հանդիսանում է ոչ թե պարզապես բնակչություն ունեցող տարածք, այլ սոցիալական օրգանիզմ, որն իր մարմինների միջոցով հանդես է գալիս միջազգային արենայում ինքնակամ և անկախ սուբյեկտ: Հետևաբար, ի տարբերություն անհատականի, «պետության կամքի ազատությունը կրում է կոլեկտիվ-սոցիալական, դասական բնույթ»: Ինչպես արդեն նշել ենք, պետությունն իր կամքի ազատությունն իրականացնում է ինքնիշխանության միջոցով, որը նրան հնարավորություն է տալիս այլ պետությունների հետ հավասար հնարավորություններով մասնակցելու միջազգային կյանքին: Տեղի են ընդգծում Ֆելդմանը և Կորոյուկովը. «պետությունը միջազգային ասպեկտով հասկացվում է որպես իշխանության և ինքնիշխանության միասնություն, որը թույլ է տալիս նրան լինելու սեփական, ինքնուրույն կամքի կրողը»: Հետևաբար, պետության կամքի ազատությունը միշտ հարաբերական է. պետության միջազգային-իրավական պատասխանատվության հիմնական նախադրյալ է հանդիսանում նրա հնարավորությունը՝ օբյեկտիվ իրավիճակներում ընտրելու վարքագծի որոշակի ձև և լինելու պատասխանատու իր ընտրության համար:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՏԻՆՈՒՄ

Ֆինլանդիայի ընտանեկան քաղաքականության նպատակն է ստեղծել անվտանգ միջավայր երեխաների աճի համար, ապահովել նյութական և հոգեբանական միջոցներ երեխաներ ունենալու և մեծացնելու համար: Ֆինլանդիան 1948թ.-ին սկսել է ստեղծել ընտանիքի աջակցման համակարգ և ներմուծել է երեխաների նպաստների համակարգը:

Երեխաների նպաստի ավելացումից, սակայն, ավելի կարևոր գործոն էր մանուկների խնամքի համակարգերի մշակումը, որը սկսվեց 1970-ականների առաջին կեսին: Երեխաների ցերեկային խնամքի մասին օրենքը ուժի մեջ է մտել 1973թ.-ին: Այն բաղաձային իշխանությունների վրա է դնում նախադպրոցական տարիքի երեխաների ցերեկային խնամքի պատասխանատվությունը: Քաղաքային իշխանությունները կարող են ապահովել ցերեկային խնամքը ցերեկային խնամքի կենտրոններում կամ ընտանեկան, ցերեկային վերահսկվող խնամքի ձևով: 1997թ.-ից ընտանիքները ունեցել են ընտրություն՝ ստանալու ֆինանսական օժանդակություն իրենց երեխաների ցերեկային խնամքի ինքնուրույն կազմակերպման համար:



ՓՈՒՆԱԿԱՆ ԿՐԻՍ

Ընտանեկան նպաստներ

Ընտանեկան նպաստների նպատակն է ծածկել երեխաների խնամքի ծախսերը, որպեսզի երեխան ընտանիքի համար չափազանց մեծ ֆինանսական բեռ չդառնա: 1997թ.-ին երեխաներ ունեցող ընտանիքների համար ընտանեկան նպաստները կազմում էին մոտավորապես 4.2 միլիարդ եվրո, այսինքն՝ ՀՆԱ-ի մոտավորապես չորս տոկոսը: Երեխաներ ունեցող ընտանիքները ստանում են աջակցություն երեխաների նպաստների և ցերեկային խնամքի ծառայությունների տեսքով:

Ընտանիքների օժանդակություն	համար	ուղղակի	ֆինանսական
----------------------------	-------	---------	------------

Ընտանիքների համար ուղղակի ֆինանսական օժանդակության տեսակներն են.

- մայրական դրամաշնորհ.

Ֆինլանդիայում ապրող յուրաքանչյուր հղի կին, որի հղիությունը տևել է առնվազն 154 օր, իրավունք ունի պետական մայրական դրամաշնորհի: Դրամաշնորհ ստանալու համար մայրը պետք է անցնի ստուգում նախածննդյան խնամք իրականացնող կլինիկայում կամ բժշկի մոտ՝ մինչև հղիության չորրորդ ամսվա ավարտը: Կինը կարող է ընտրություն կատարել՝ ստանալ մայրության դրամաշնորհը գումարի կամ մայրության փաթեթի տեսքով, որի մեջ ներառված են երեխաների խնամքի համար նախատեսվող տարբեր իրեր:

- երեխաների նպաստ.

Ֆինլանդիայում երեխաների նպաստը հիմնական միջոցն է, որը հավասարեցնում է երեխաներ ունեցող և չունեցող ընտանիքների ծախսերը: Այն վճարվում է պետական միջոցներից՝ Ֆինլանդիայում ապրող յուրաքանչյուր 17 տարեկանից ցածր երեխայի համար: Երեխաների նպաստը չհարկվող եկամուտ է, և ընտանիքի ֆինանսական դրությունը չի ազդում դրա վրա: Երեխայի նպաստի մեծությունը կախված է ընտանիքում երեխաների թվից: Երեխայի նպաստը գնահատվում է այնպես, որ ծածկվի երեխայի հետ կապված ծախսերի մոտավորապես կեսը:

- խնամքի նպաստ.

Խնամքի նպաստի նպատակն է երեխայի խնամքի ապահովումը որոշ դեպքերում, երբ Ֆինլանդիայում ապրող 18 տարեկանից ցածր երեխան չի ստանում բավարար խնամք իր երկու ծնողներից: Երեխան իրավունք ունի խնամքի նպաստի, եթե իր մեկ ծնողը, որն ապրում է այլ վայրում, հրաժարվել է վճարել երեխայի խնամքի համար, որի պարտավորությունը նա ունի՝ ըստ պայմանագրի կամ դատարանի կայացրած վճիռ:

- բնակարանային աջակցություն.

Բնակարանային աջակցության նպատակն է օգնել ընտանիքներին՝ ձեռք բերելու բավարար բնակարանային հարմարություններ խելամիտ գնով և ապահովելու բավարար բնակարանային պայմաններ: Երեխաներ ունեցող ընտանիքների համար բնակարանային աջակցության ձևերն

են բնակարանային նպաստը, կառավարության կողմից սուբսիդացվող բնակարանային վարկերը և այլ տոկոսային սուբսիդիաներն ու հարկային արտոնությունները բնակարանային վարկերի համար:

- եկամտի աջակցություն.

Եկամտի աջակցությունը ֆինանսական աջակցության վերջին մակարդակն է և ներկայացնում է ընտանիքին տրամադրվող աջակցության կարևոր միջոց: Քաղաքային իշխանությունը վճարում է այս գումարը, եթե ընտանիքը չունի եկամուտ, կամ նրա եկամուտը բավարար չէ ամենօրյա անհրաժեշտ ծախսերը ծածկելու համար:

Մանուկների աջակցություն	ցերեկային	խնամքի
-------------------------	-----------	--------

Մանուկների ցերեկային խնամքի համակարգը մշակվել է, որպեսզի ընտանիքներին առաջարկվեն ընտրության մի շարք տարբերակներ, որոնք թույլ կտան ընտրել, թե որն է ավելի համապատասխան ընտանիքների կարիքներին: Կանանց ակտիվ մասնակցությունը աշխատանքային կյանքին խթանել է մանուկների խնամքի և ծնողների աշխատանքային ապահովվածության վերաբերյալ օրենսդրության մշակումը: Ծնողական արձակուրդների համակարգերում ընդունված սկզբունքը կայանում է նրանում, որ երկու ծնողներն էլ իրենց երեխաների խնամքի համար պետք է ունենան հավասար հնարավորություններ:

Ծնողի արձակուրդ - ծնողի նպաստներ

Հղիության, երեխային ծնունդի կամ խնամքի համար մայրը կամ հայրը կարող են վերցնել համապատասխան արձակուրդ՝ ստանալով նպաստ: Մայրական կամ ծնողական նպաստը վճարվում է 263 աշխատանքային օրվա համար: Հայրը կարող է ստանալ նաև լրացուցիչ հայրական նպաստ: Մորը վճարվող նպաստի ժամանակաշրջանը, որը նախորդում է ծնունդին, պահպանում է մոր և չծնված երեխայի առողջությունը՝ թույլ տալով մորը որոշ ժամանակ լինել աշխատանքից դուրս: Ծննդին հաջորդող ժամանակաշրջանը թույլ է տալիս մորը վերականգնվել ծննդաբերությունից հետո և խնամել նորածնին: Ծնողական նպաստի ժամանակաշրջանը ընտանիքին թույլ է տալիս ընտրել, թե ով պետք է մնա տանը՝ երեխային խնամելու համար: Հոր նպաստը թույլ է տալիս հորը մասնակցել երեխայի խնամքին և խթանում է հոր և երեխայի միջև կապի հաջող զարգացումը:

Աշխարհի ամենահին Սահմանադրությունը Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությունն է, որը վավերացվել է Նոր Հեմփշիրում՝ 1788թ.-ի հունիսի 21-ին և կիրառման դրվել 1789թ.-ի մարտի 4-ից: Սահմանադրություն չեն ունեցել միայն Իսրայելը, Լիբիան, Նոր Զելանդիան, Օմանը և Մեծ Բրիտանիան:



Օկլահոմայի «մահացու հետևանքով վթարի մասնակից» վարորդները, համաձայն տեղական օրենքի, պարտավոր են կանգնել և տուժաժին (այսինքն՝ մեռյալին) հայտնել իրենց անունն ու հասցեն:

Բարիայում ձիերի տերերին արգելվում է առանց «կենդանու զավակին հուսալի ամրացված վառ կարմիր ետնամասային լույսի» գիշերով փողոց հանելը:

Կալիֆորնիայում հասարակական ելույթների ժամանակ հակառակորդներին դեմք ծամածռելն արգելված է:

Կոնեկտիկուտի նահանգի Հարթֆորդ քաղաքում արգելված է փողոցն անցնել ձեռքերի վրա: Այդ օրենքը տարածվում է և տեղացիների, և եկվորների վրա:

Նյու-Յորքում օրենքի խախտում է համարվում վարսավիրի մոտ սափրվելու ժամանակ բազկաթռոնն ննջելը:

Ֆիլադելֆիայում արգելված է պատուհանից դուրս նետել կանացի կիսաշրջագետներ:

Ինդիանա նահանգի Հարի քաղաքի բնակիչներին արգելված է կինոթատրոններում հայտնվելը կամ հասարակական երթևեկամիջոցներից օգտվելը ոչ շուտ, քան սխտորն ուտելուց չորս ժամ հետո:

Քիվլենդում կարելի է կրակել հարևանի հավի ճտերի վրա միայն այն պայմանով, որ մինչև տասնհինգ մետր հեռավորության վրա ապրող հարևանները չառարկեն:

Մինչև 1971թ.-ը Ալաբամա նահանգում ամուսինն իրավունք ուներ խեղդելու իր սեփական կնոջը, եթե վերջինս ինչ-որ բանով դժգոհություն պատճառեր իր կողակցին:

Հավայան կղզիներում խստագույնս արգելվում է կրել ամերիկյան մետաղադրամներից մանյակներ:

Ավստրալիական պառլամենտը վերջերս ընդունել է օրենք, ըստ որի, այսուհետև գիշերային բարերում և ակումբներում որպես բարմենուի կարելի է աշխատանքի ընդունել վաթսու տարեկանից բարձր տարիքի կանանց:

Գերմանիայի դպրոցի պատմության մեջ առաջին անգամ դատի է տրվել ուսուցիչը, որը մեղադրվել է... ծուլության մեջ: Շվարֆա քաղաքում գերմաներեն և լատիներեն լեզուների ուսուցիչ քառասունամյա Քրիստոֆ Ֆ.-ն իր սաներին գրեթե տնային հանձնարարություններ չի տվել, ոչ ոքի վատ գնահատական չի նշանակել, ինքն էլ նեղություն չի քաշել պատրաստվելու դասերին: Դատարանը նրան ենթարկել է դրամական տուգանքի:

Հին Հռոմում մահվան դատապարտվելու ենթակա էին այն դատավորն ու միջնորդը, ովքեր մերկացվել են այն բանում, որ դրամական հատուցում են ընդունել տվյալ գործով:

Կարթագենում գործում էր մի օրենք, որն արգելում էր գինի խմել այն օրերին, երբ կատարվում էին ամուսնական պարտականություններ:

Հին Հնդկաստանում, եթե նկատում էին, որ պաշտամունքի սպասավորը հարբած է, ապա նրան ստիպում էին շիկացած մետաղյա թասով եռացրած ջուր խմել՝ մինչև մեռնելը:

Շատ վաղուց անգլիական թագավորական պալատում ընդունելության ժամանակ սեղանների վրա պատառաքաղները դրվում էին ատամները վերև վիճակում: Բայց մի անգամ, 1725թ.-ին Գ-կորգ առաջին թագավորը վեճի ժամանակ ձեռքով խփել է սեղանին և ծակել ձեռքը: Այդ ժամանակից ի վեր՝ թագավորական հատուկ հրամանագրով պատառաքաղները սեղանին են դրվում միայն ատամները ներքև վիճակում:

Անգլիայում մինչև այժմ էլ ուժի մեջ է XVII դարում ընդունված այն օրենքը, որով տղամարդկանց արգելվում է երեկոյան ժամը 9-ից մինչև առավոտյան ժամը 6-ը ծեծել կանանց, որովհետև այդ պահին բարձրացրած աղմուկը կարող է խանգարել հարևանների գիշերային հանգիստը:

XVI դարի վերջերին Անգլիայում ծխելու համար մահապատժի էին ենթարկվում: Ծխողների գլուխները կտրում էին և, ի խրատ մյուսների, ծխամորճերը բերաններին ցուցադրում հրապարակներում:

19-րդ դարում Անգլիայում հրատարակված լավ վարքագծի դասագրքերից մեկում ասվում է, որ անվայելուչ է նույն գրադարակում պահել կնոջ կողմից գրված գրքերը տղամարդ հեղինակների ստեղծագործությունների կողքին և ավելացնում է՝ բացառությամբ, եթե նրանք ամուսիններ են:

Ճապոնական ոչ մեծ քաղաքներից մեկի պատասխանատուները ընդունել են օրենք, համաձայն որի, անհամ ճաշ պատրաստած կանայք ենթարկվում են դրամական տուգանքի: Տուգանքը նշանակվում է ամուսինների գրավոր բողոքի հիման վրա:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Հեռ.՝ (374 10) 54-01-99
Ֆաքս՝ (374 10) 58-02-99
Էլ.փոստ՝ legalnewsletter@ayla.am

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ

Հասցե՝ ք. Երևան,
Նալբանդյան 7, բն. 2

Պետական գրանցման վկայականի համարը՝
03Ա 057970, տրված՝ 27.12.2002 թ.

Թողարկման պատասխանատու և խմբագիր՝
Նարինե Կարապետյան

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ»
ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ

Տպաքանակը՝ 500 օրինակ
Ծավալը՝ 1 տպ. մամուլ
Ստորագրված է տպագրության
31.01.2007թ.

Տպագրվում է 2006թ. հունիսից